

Գ Ա Յ Մ Ա Ն Ք

ՊՐԻՆԿՍԻՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ՍՐՏԱՍՏԱՍԱՆ

Երկու քիւր մեկ ծրարով

Տարեկան 14 Ֆր.

Վեցամսեայ 7 Ֆր.

ՍՄԵՐԻՍԱ


Տարեկան 2.60 Տօր.

Վեցամսեայ 1.50 Տօր.

ԿԱՆԽԻԿ

ՄԱՆՈՒՅՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵԹ.



Լ Ր Ա Կ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՍԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Redaction du Journal

«Travounk»

(Bulgarie) VARNA

Редакция

на ВѢСТНИКЪ

«Ирѣвѣнскъ»

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ
տրոշիր

ԱՊԱԳԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Բառաշիկայ կաթողիկոսական ընտրութեան առթիւ Տիգրիսի մէջ կատարուած նախընտրական խորհրդակցութիւնները վերջացան Այդ խորհրդակցութեանց կը մասնակցէին Տիգրիսի պատուիրակները Շուշիի և Պաթումի պատգամաւորները և Տիգրիսի զանազան խաւերէն անձնաւորութիւնները:

Այդ խորհրդակցական նիստերու առաջին մասին մէջ զբաղեցան կաթողիկոսներու համար ժամանակակից և անյետագայի պահանջներու քննութեամբ: Հոն յայտնուեցաւ թէ հայ հասարակութեան ի գիւմաց խօսող այդ պատգամաւորները չեն ուզեր այլեւս հաշտուիլ այն գրութեան հետ, ուր կաթողիկոսը գործիք կը դառնայ իր մտերիմներու ձեռքին մէջ և գործերու բազմը կը մատնուի պատահականութեան քմահաճոյքին: Հասարակութիւնը կը պահանջէ որ կաթողիկոսի մերձաւոր խորհրդակցանքը ոչ պատահական լինի անոր ըլլան և ոչ ալ անկող և կողմնակի անձեր: Այլ ժողովուրդի վստահութիւնը վայելող և ասոր կամքը ու կարծիքը ներկայացնող ընտրուած մարդիկ:

Խորհրդակցութեան նիստերու երկրորդ շրջանը նուիրուած էր կաթողիկոսական թեկնածոներու արժանիքի քննութեան: Անուններ տրուեցան և քննութեան ենթարկուեցան:

Ժողովականներու մէջ երկու հոտանք կը նշխարուէր, մէկը իգմիրեանական և միւսը Օրմանեանական: Օրմանեանականները սկիզբէն ինքզինքնին իշխման ենթարկելու համակիր ցոյց կուտային, բայց յետոյ պարզուեցաւ թէ ասոնց մէջ կայ մաս մը որ գիտունք կը նշխարուէր, մէկը իգմիրեանական և միւսը Օրմանեանական: Օրմանեանականները կը վաւերացնէ երբ անոր քով իգմիրեան մը կայ, ժողովականներու այս մասը վերջ ի վերջոյ Օրմանեանի ի նպատակ և իգմիրեանի համակիր գիւմաց խօսող անոր անցնելու համար:

Երկրորդ ժողովներուն մէջ վիճարանութիւնները այն բնաւորութիւնը ստացան որ իգմիրեանը պաշտպանել կը նշանակէր Օրմանեանին դէմ ըլլալ և փոխադարձաբար: Տրամադրութիւններու այդ լարուած դրութեան մէջ եթէ երկուսն էլ ցանկ պատրաստուէր, մեծամասնութիւնը իգմիրեանին քով դուրսէն անուշը պիտի դնէր, իսկ միւս մասը Օրմանեանին հետ ուրիշի մը անունը, բայց ոչ իգմիրեանը:

Ինչպէս հայ ժողովուրդին ըստուար մեծամասնութիւնը, հայ մամուլը գրեթէ ամբողջութիւնը, նոյնպէս ալ «Մշակ», միակ արժանաւորագոյն ընտրելի իգմիրեանը ցոյց տուած են: «Մշակ» խմբագրատան Ա. Բալանյան թար այս մասին խմբագրականի մը մէջ հետեւեալ կերպով կամփոփէ իր կարծիքը, որ մերն ալ է:

Ինչպէս ինքնակազմ կաթողիկոսական թեկնածոներին անունները, մենք զեկամարդի եւք միմիայն մի ցանկութեամբ, անաչառ և անկա՝ օրէն յայտնել մեր անկեղծ կարծիքը այդ թեկնածոներին մասին:

Դեռ իգմիրեանի անունը և ցանկանալով որ նա կաթողիկոս ընտրուի, մենք յոյս ունինք հասած լինել երկու նպատակի, այն է նախ տեսնել իշխման գահի վրա փորձառու, խոհուն և սահմանադրական մի անձի, որ գիտէ լսել իր հօտի կարգը: Ներքին ձայնը և երկրի կամքը և ուժի տէր է որոշ ծրագրերի առաջ տանելու և իրագործելու, երկրորդ հաստատել կարգապահութիւն և օրինապահութիւն բոլոր այն վարչական և կուլտուրական գործերում, որոնք կապուած են իշխման հետ և այդպէսով վերջ գնել այն կառավարականութիւններին քմահաճոյքներին և երբեք գործունէութեան, որոնք տիրել էին վերջին տարիները իշխմանում և քարուքանդ արել ամէն բան:

Արդարեւ իգմիրեան իր անցեալ գործունէութեամբ յայտնի է իրեն վերին աստիճանի սահմանադրական և օրինապահ մի անձաւորութիւն:

Այն հանգամանքը, որ քաղաքական պատճառներով իգմիրեանը աքսորուած է երեսօղէմում, ինչպէս աքսորական էր նրանից առաջ Ուրմեանը, առաջ է բերում զօգոյցի պահանջները խորհրդածութիւնները: Երկուսն էլ քաղաքական գործունէութիւն ունեցան, երկուսն էլ աքսորվեցին երեսօղէմ, երկուսն էլ մատնվեցին անգործութեան իրանց աքսորավայրում: Իսկ նրանք տարբեր բնաւորութեան և տարբեր գործելակերպի մարդիկ էին: Ուրմեանը բանաստեղծ էր օրինապահութեան վերաբերութեամբ, վարչական մարդ չէր և մինչև վերջ էլ զօրկ մնաց վարչական գործունէութեան պահանջները ըմբռնող: Իգմիրեանը ընդհանրապէս սահմանադրական կարգապահութեան և որոշ վարչական յարաբերութիւնների շատագուց էր, հակառակ լինելով կամայականութեան և քմահաճոյքների գերիշխմանը: Երբ խախտուել էին կանոնաւոր և արդիւնաւէտ գործունէութեան հիմունքները մեր շատ վործերում:

Ուրմեանը հայրիկը, ճիշտ է, սիրւում էր ճանաչել և բոստել կարգ ու կանոնը, բայց նա չէր կարողանում քաղաքական իր պահանջները իգմիրեանը երկար տարիներ զբաղուած է եղել նոր, քրքրեալ, սլակելով Պոլսի ազգային սահմանադրութեան հիմնարկում: Ինքը առաջին օրինակատարն է եղել իր գործունէութեան ժամանակ:

Իգմիրեանը գիտէ կարգ ու կանոն սահմանել, գիտէ նրանց յարգել, գիտէ և պահանջել, որ ուրիշներն էլ կատարեն սահմանուած կարգ ու կանոնները:

Սահմանադրական կարգերի սովոր և սահմանադրական ոգու պաշտպան իգմիրեանի անցեալը պէտք է գրական լինի մեզ համար, որ նա ընդունակ կը լինի ժողովրդական ձայնը լսել և անկան բոլոր կետերում և հիմունքներում գործունէութիւնը և գործաւարտութիւնը ժողովրդական կարգի և ճշգրիտ ըմբռնողութեան վրայ:

ՀԱՅԿԱԿԻՄԻՆ՝ ՎԻՃԱԿԻՆ

Իսկապէս կեդրոն վանք իր արուարձաններով ու շրջակայ գաւառներով քանդուածի ու աւերի մատնուած է այսօր միայն հայոց համար, իսկ թիւրքը ու Բիւրքը իր գիրքին իր կեանքին ու ստացուածքին տէրն է հոն: Հալածանքը միայն Հայերու ուղղուած է. Ժէօն-թիւրքերու անունով խօսող, անոնց կանոնադրութիւնները ու կոչերը վանքն ստացող կարգ մը հրապարակագիրներ այսօր միայն ու բացառապէս Հայերուն ջարդը: Հալածանքը արձանագրելով կանցնին, հարիւրաւոր հայ գիւղիկներու տխուր շարքը ցոյց կուտան, անոնց կարենալու անոնց մէջ չիլաւի համարածէօն թիւրքի մը, եթէ ոչ գիւղիկ, գոնէ կաթիլ մը արիւնը ցոյց տար:

Դաւաճան Դաւիթի և բռնաբարիչ Արամի երեկուան ընկերները հայրենիքի այս քանդուած գուժող նամակները ու քստմնելի լուրերը կարգաւորով արգեօք չե՞ն խղճահարի, չե՞ն կարմիր յօնք շինելու տեղ աչք հանած ըլլալուն համար: Այլ վաղ անցանք ձեր շինելիք յօնքէն, գոնէ աչքերնիս ողջ թող մնայ:

Հայաստանի մէջ Ժէօն թիւրքերու կազմակերպութեան գոյութեան կասկածելիութիւնը երբ մենք ցոյց կուտայինք ասկէ առաջ, Դաւանակցականները մեր աչքիս թուղթի կտորներ կը հըրամցնէին, այսօր յայտնուեցաւ թէ վանայ մէջ և իր շրջակայքը այդ Ժէօն-թիւրքերը իրենց բայակայութեամբ կը փայլին: «Հայերը կոտորելու ու հալածելու համար մեր գիւղիկներուն վրայէն պէտք է անցնին» ըսող Ժէօնները օւր մնացին. եթէ անոնք գոյութիւն ունէին այդ երկրին մէջ, գոնէ դաւաճան Դաւիթին սպանուած ինչու անոնց չը ձգնէր զոհեցալ, որպէսդի ատով իրենց գոյութիւնը գործնականապէս սպառնացանին և հայ ժողովուրդը խնայուէր այս ողբալի հետեւանքէն:

Սարսափի վաճառք

Հակառակ թիւք կառավարութեան վստահացումներուն, զորքերը կաւերեն վանայ գաւառը՝ ժողովուրդը զինաթափ ընելու պատրուակով և հաւատացնելու համար Եւրոպայի ապստամբութեան մը գոյութիւնը. իշխանութիւնք խուզարկութիւններ կը կատարեն բոլոր գիւղերուն մէջ՝ Իւզաքիք ստիպուած են հին զէնքեր գնել յանձնելու համար. իսկ ըստ ըստի որդւոյն ձէվտէտ պէյի հրամանովը անլուր տանջանքներ կը տրուին բնակիչներուն. Խաչէնի մէջ այդ բռնութիւնները տասը օր տեւեցին, կիներ բռնաբարուեցան, գեւատի աղջիկներ հոգեվարքի մատնուած են, եօթը այր և երկու կին մեռան հարուածներու տակ. յիսուն կիներ կիսամեռ վիճակի մէջ են. Ումանք տանջանքէ ազատուելու համար անձնասպան եղան. սարսափահար ժողովուրդը միջոց կը փնտռէ կամովին զաղթելու:

Կառուարի բնակչութիւնը յուսահատութեան մատնուած, կընդդիմադրէ զէն ի ձեռին, արիւնահեղ ընդարարումներ տեղի ունեցած են:

Բոս Արմենա

Թաւրիզ, 7 յունիսի

Վանից ստացուած նամակներէց եւ նորերս Թահիր-բաշայի հեռ եկող հայրենակիցներէց ստացուած տեղեկութիւնները վաւեր վերաբերմամբ խիստ յուսահատական են. անտեսական ծանր վիճակը այլեւս աննկարագրելի է դարձաւ. ցորեն չէ ճարելու, գարին էլ չատ սող է. Այդ ծանր կացութեան փոքր իշխանութիւնները ստուգուած համար ձեռնհաս անձնաւորութիւններ ունենորներ մէջ հանգանակութիւն են բաց արել եւ, բաւական ցորեն ձեռք բերելով, սովածներին են բաժանել. Անգլիական շնչապանք ու ամերիկական միսիօնարներ ստացած նպաստները կարիքի ամենաշնչին մասը չեն լրացնի. Նամակներէց մէկում կարդում ենք. «Թշուառութիւնը սաստիկ է եւ ընդհանուր, ամենայայտնի հարուստն անգամ հացի պակասութիւնից չուարել է»:

Հայրենակիցներ, եթէ այս ծանր օրերում, որ մեր իսկ ձեռքով ստեղծեցինք, մենք չը կարողանանք ի գործ դնել մեր էնէրգիան յօգուտ մեր ցաւատանը հայրենիքի, ապա էլ երբեք որդի ենք. Միջոցներ ձեռք առէք նըպաստ հասցնելու հայրենիք. վանեցուն այժմ զէնք պէտք չէ, զէնք գործածելու համար չէ պէտք է, ոյժ ունենալու համար հաց է պէտք. Ուրեմն նախ հաց եւ ապա զէնք:

Կը տեղեկանանք նոյնպէս թէ ձեր բակայլած են Դաշնակցութեան ներկայացուցիչ օտարահայատակ Արամ եւ Լէր չափ փախուսական վանեցի իրտասարգներ. Փնտրուում են բոլոր աշէր ընկնող երկտասարդներ:

Առաջին կոտորածին սպաննուել են ի միջի այլոց Մաքսապետեան Մկրտիչ եւ Սապոնեան Սահակ. Էֆէնտին, կառավարական պաշտօնեանիւր Միւսնոյն նամակում կարգում ենք. «Շատ փոթորիկներ եկան անցան եւ շատ ծանր կոտորուեցան. բայց դեռ տեսնեմք ինչպիսինքն էլ կոտորուելու են. »

Չարիքի պատճառ Դաւիթից զատ կարեւոր մատնութիւններ է արել նաեւ Մուշից փախած մի անձ, որ երեւի ուղեցել է այդ կերպով իր պատիժը թեթեւեղ:

«Մշակ»

ԿՈՎԿԱՍՏԱՆ ԼՂԻՐԵՐ

Հայութեան այսմեծ գաղթավայրէն վերջին տարիներու մէջ սովորական եղաւ մէկ բարի լուրի գէմ տասը չար ու տխուր լուրեր ստանալ. Դաղափարական և յեղափոխական ստուարութիւն օճէթէիքէնտներ ունեցող հայութեան այս մեծ հատուածը շատ մուսլի ապագայ մը կը խոստանայ ազգին. երեւոյթները ու գէպքերը թող խօսին հոս:

—Տիգրիս հրատարակուող Հովիւ շարաթաթերթի վերջին թիւին մէջ կը կարդանք հետեւեալը. «Մօտ օրերս մի անսպասելի մահափորձ կատարուեց Պ. Նիկողոսյան Նարիմանեանի կեանքի դէմ Այդ ոչնչով շարաթարացուած ոճիր միայն զգուանք առաջ բերեց թիֆլիզի հասարակութեան մէջ, որի յարգուած անդամներից մէկն է նա. Դա մի թիւրիմացութիւն է անկասկած. երեւի շարաթործներ խառնել են անձնաւորութիւններ, Պ. Ն Նարիմանեանը իր հասարակական գործունէութեամբ ժողովրդի բոլոր խաւերում միայն համակրանք է վայելում»:

—Պագուէն անցորդ մը կը գրէ թէ Բալխան արուածանին մէջ հայու մը տուն կը մտնեն քանի մը զինեալ հայ երիտասարդներ ու բռնի փախցնել կուգան 13 տարեկան աղջիկ մը. Աղջկան մէկ եղբայրը երբ կը միջամտէ մեղմօրէն, գնդակահար կը սպաննեն, իսկ մեծ եղբայրը մահուան սպառնալիքի տակ կը ստիպուի փախչիլ քաղաքէն:

Շահալի մէջ քանի մը ծպտեալ անձեր մը մտնեն Ալլակ Տ. Յովհաննէսեանի տունը եւ կառուանգին 21 տարեկան Դարեգին որդին. 4000 ռուպի փրկանք պահանջելով:

Արեւի գաւառին հայաբնակ գիւղերէն աւազակներ գիւղացիներու անասունները կը քեն. եւ ծանօթ հայեր միջնորդի դեր կըստանան. աւազակներու եւ անասնատիրոջ միջեւ ու ըստանալով գողցուած ապրանքի արժէքը կամ 2/3 մասը՝ անասունները կը վերադարձնեն. Գիւղացիք այսօր այսպէս կըսեն եղբր միսբերան, «կըրեններու ժամանակ մեռնողները մեզանց շատ բախտաւոր են, երանի նրանց»:

Ժողովուրդի մէջ սա փոփոխութիւն կայ եղբր թէ այդ միջնորդ հայերը կամ գողութիւնները թեւադրողներն են կամ մասնակիցները, քանի որ անոնք գողերը ցոյց չեն տար:

ՏԵՂԱՎԱՆ

Ընտրողական ժողովոյ նախագահ Կոր կողմէ մեր նախորդ թիւով հրատարակեցինք Պաշտօնական ազդ մը. որով կը հրաւիրուի վաճառարանակ հայութիւնը մասնակցիլ յառաջիկայ կիրակի օր կատարուելիք ընտրու-

թեան նոր թաղ. Խորհրդոյ. Ինչպէս կ'իմանանք, այս անգամ վաճառականաց դասէն ընտրելիներու ցանկ մը պատրաստուելու վրայ, եւ ոմանք կը ջանան գիւղերի տէր անձեր գործի գլուխ դնել. Այդ քայլը մեզ անհաճոյ չէ, երբ կը յայտարարուի թէ այդպիսիք տէրան ձեռք իրենց հաճութիւնը տուած են սիրայօժար ստանձնելու թաղականութեան պաշտօնը. Միայն կը մաղթենք որ ընտրուելէ եւ մէկ երկու նիստի ներկայ գտնուելէ յետոյ մոռացութեան չտան իրենց պաշտօնին պարտականութիւնները ու պահանջները, ինչպէս որ ասկէ առաջ քանիցս պատահած է եւ պաշտօնի գլուխ մնացած են միտոյն մէկ կամ երկու եկեղեցի մարդիկ:

Եթէ այս անգամ ալ նոյն տգեղ երեւոյթները կրկնուին, եւ ընտրուելէ յետոյ այդ տգիւրքի տէր մարդիկ միայն իրենց բացակայութեամբ փայլին Խորհրդարանին մէջ եւ գործը ձեռք միայն այնպիսիներու ձեռքը օրոնք հասարակութեան համակրանքը ու վստահութիւնը չեն վայելել, միեւնայն աստեւ խաղաղանք ձեռք պիտի առնենք անինայ հարուածելու այդ ազգին կամքին ու քուէին հետ խաղացողները, զիրենք յակահէ անուանէ նշաւակելով. Եւ մահաւանդ երբէք չը պիտի ներենք անոնց որոնք իրենց ընկեր անել կուգան այնպիսի մարդիկ, որոնց տխուր պատկերը մէկէ աւելի անգամներ ցոլացած է այս սրէնակներուն մէջ. Մենք այժմէն չպիտի հակառակորդեմք անոնց այս քմահաճութիւն, այլ իրենց վարմունքը ու գործը տեսնելէ վերջ է որ պիտի յանձնենք զիրենք հասարակաց դատաստանին:

Սո ուրեմն, թող ընտրեն ու ընտրուին. վերջը կը տեսնուինք. իրենց գործերէն դատելով զիրենք. Եւ որոնց որ կակնարկենք, անոնք, նոյնպէս ալ մեր ընթերցողները, լաւ գիտեն թէ մեր քննադատական գրիչը չեն կրնար կասեցնել ոչ անձնական բարեկամութիւն, ոչ տանեակ տարիներու բաժանորդագրութիւն, ոչ գիրքի ու խմբակցական նկատում եւ ոչ ալ Խաւունքի դէմ «պոյժ» ընելու սպառնալիքը. Մենք սեւին սեւ եւ ճերմակին ճերմակ ըսելէ ցարդ չենք քաշուած ու չպիտի քաշուինք յայտն:

Որոնք որ իրենց անունը ընտրելաց ցանկին մէջ կը տեսնեն ու լուծին կը պահեն, պաշտօն ստանձնելու պատրաստութիւն ցոյց տուած կը համարուին. Ուստի անոնք որ լուրջ պատճառներ ունին թաղականութիւն չըստանանելու, պէտք է որ միշտ ուրբաթ օր իրենց անունը ջնջել տան ընտրելիաց եռապատիկ ցանկէն, որ արդէն կախում է եկեղեցւոյն գաւառի մէջ Այս բարեկամական ազդարարութիւնը մըն է զոր հարկ կը դատենք ընել անոնց որոնց որ անկ է:

ԳԱԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ՆԻ Ո Ճ Ի Ր Ը

Ամսոյս 10ին չորեքշաբթի օր վերջապէս եղեւնադատ ատենաւ. յետ դատավարութեան իւր վճիռը արձակեց Արփիարի տնօրէն մահուան դատապարտելով, իսկ Զարեհ Գոչեանը անպարտ արձակելով:

Ըստ երեւոյթին, տեղւոյս հակայեղափոխական Անդրանիկեան խմբակը անարկուած զգոց ինքզինքը, տեսնելով ապարդիւն այնքան բազմախոս ճակատորոմները, Զարեհ Գոչեան մը դատապարտելու ճիգին մէջ:

Յեղափոխութեան համար սակէ աւելի միմիկարական կէտ մը չը կրնար ըլլար որ անուղղակի առիթ տուաւ իր յաղթանակը տանիլ հակայեղափոխական տարրին դէմ. վաճառի ասոնք ոչ թէ ունեցէ խմբակի մը ազգին վընասակար ըլլալուն նկատմամբն էր որ մուծին մէջ էնթրիքներ լարեցին զանոնք իսպառ ոչնչացնելու այլ իրենց ազգաւոր ծրարիւր յառաջ տանելու. եւ ուղղակի յեղափոխութիւնը վտանգելու. Միշտեւ իսկ չը կայ միեւնոյս եւ չը սահմանակցաւ ազգային իշխանութիւնը մատնուեալն զիմու, ամօթ հազար ամօթ այս տեսակ ազգային ճիգներուն, որոնք տեղւոյս հայ ժողովուրդը զեղափարող մարմինը կը ներկայացնեն:

Ընթերցողները այս տղիւր կարգաւով չը կարծեն թէ, գրողը Արդունան խմբակի պաշտպան է եւ ջատագովորը անոնց անիմապարտ ոճիրներուն. ոչ երբեք, ընդհակառակը, դատապարտելով կը դատապարտեմ այդ ոճրագործ խմբակին եպերելի արարքները. Բայց միւս կողմէ ալ խղճիս ազատութիւնը չեմ կարող իմ մէջս խեղդել. ով կարող է ըսել թէ այս խմբակը եթէ յաջողէր իր դաւադրութիւններուն մէջ այլեւս կարող պիտի ըլլար ու եւ ինչ յեղ. կազմակերպութիւն յեղ. ձեռնարկ մը կամ թէ մեղմացուցիչ պատգանքներով հարուստին մօտենալ, անկէ յանդիման յեղ. դրամ խնդրելու. անմիջապէս փոխանցել զխուռն ծախու պիտի առնէր, վասնզի այս անխիղճ ազգապանները ուղղակի կառավարութեան դիմելով պիտի մատնէին. Ուրեմն Գոչեանի մը ազատելովը անոնք շատ լաւ զգացին որ արդարութեան ատեն իրենց ձեռաւոր ոսկիները օգուտ չունեն:

Կիմանանք որ օտարկանութիւնը, Զարեհ Գոչեանը արտաքսած է երկրէն, պիտի թեւադրենք իրեն որ առաջին օտար կոխած երկրորդ, իրեն ազատարարներուն կենացը եւ արեւշատութեանը համար եկեղեցիներու մէջ աղօթքներ ընել տայ, վաճառի թերեւս սա մեր խեղացի Դաւիթ, հակայեղ. խմբակը չըլլար, Զարեհ քիչ մը դժուար տալով, Զարեհի փառաբանը անոնց այս սխալ քայլերէն օգուտելով կարողացան պաշտպանել ամբաստանալը. սա փաստները մէջ բերելով Առաջին ոճրագործը կապտան պէյին (լրտեսապետ) տուել բերելով զայն համոզել, որպէս զի եթէ խոստովանի թէ Զարեհ Գոչեանը զէնք տուած է իրեն ոճիրը գործելու համար, այն ժամանակ ինքը ազատ պիտի արձակուի. Երկրորդ Դաւիթն Զոյաքեանի մը սուտ վկայութիւնը, երրորդ՝ ասկէ ինք ամբաստով խմբակին կողմէ դաւադրութիւն մը սարքելով, Լաւրենցի եւ Գոչեանի կենացը դէմ որ «Ազգին» մէջ գրուած էր եւ ես ալ համառօտակի կը պատմեմ. Ահա այս երեք չախախտ զէնք բերով փաստաբանը կարողացաւ Գոչեանը ազատել:

Լաւրենցի եւ Գոչեանի դէմ յայտնի խմբակի կողմէ ասկէ գրեթէ ինը ամիս առաջ դաւադրութիւն մը սարքուած էր. Խմբակին յայտնի պարագրուները (ինչպէս Զարեհ Պէշիբեան սրճարաններուն մէջ պողոտայ) Անդանիկեան Գոչեան եւ Տաղաւարեան, գիտնալով որ այս երկուքին ներկայութիւնը Դաւիթի մէջ իրենց հաղթանակութիւնը կը թթուեցնէ, Դաղաւարեան կորույնն ասոնք մէջտեղէն վերցնելու միջոցը խորհել, եւ որովհետեւ այս գործը գլուխ հանելու համար անօթի անձներ պէտք էին, կը յաջողին երկու հառ ձեռք ձգել, որոնցմէ մին էր, Զոյաքեան Նրէշը եւ միւսը հակակաւոր

Գասապ Զարեհը Ասոնց ամեն ինչ կը պարզեն եւ կանխազգար կոկիկ գու- մար մըն ալ կուտան, որպէս զի գործի սկսին Երկու անօթի շունչը փայլուն ոսկինքէն շրտած, ամենախոնարհ հա- ճութեան խօսք կուտան զաւարտուած որձը գլուխ հանելու եւ որովհետեւ իրենց կեանքի գնով գործերնուն չէր զար տեղօրը կատարել, կը փնտռեն երրորդ գոհ մը զոր կը յաջողին գտնել Տնօրէցոյն Յարութիւն անունը, կը կան- լին իրենց քով եւ կը համոզեն ըսելով որ հոս երկու ազգադասներ կան, ե- թէ զոն հայ եւ եւ հայու արիւն կը կրնայ պէտք է այս զաւաճանները մէջ- տեղէ վերցուին»։ Եւ կը խոստանան ի- յան 107 ոսկի տալ եթէ յաջողի։ Կա- եւ փախցնելու ամէն ապահով միջոց։ Երբ իրենց կը ընդունին առաջարկին եւ ըստարար, միտքը դնելով որ եթէ յա- յողի զաւարտութիւնը ապագոյցանող որոշ փաստեր ձեռք ձգել անմիջապէս կատարութեան լուր տայ։

Երբ իրենց անոնցմէ հեռանալէ վեր կերթայ ուղղակի խնդիրը կը պարզէ մի քանի մտերմներուն, որոնք իրեն պէտք եղած խորհուրդները կու- տան։

Զերկարեցնելով մի քանի օր անց- նիկէն վերջ տղան կը ներկայանայ դարձեալ երկու յայտի բախտախնդիր- ներուն եւ կը յայտնէ անոնց որ ամէն ինչ կարգին է երկրորդ տեղօր մըն ալ գտած է, միայն կը մնայ զէնքը եւ խոստացուած գումարը յանձն կառ- նեն, պայմանաւ որ միայն 15 ոսկի կանխազգար տան, իսկ մնացեալին մօրհակ մը իրենց ստորագրութեամբ ողան կը հաւանքի եւ 15 ոսկին, զէն- քը եւ մօրհակը առնելով ուղղակի կատարութեան կերթայ եւ ամէն ինչ կը յայտնէ։ (մօրհակը հողի խնդրոյ պատրաստին առկա շինուած էր)։

Կատարութիւնը ամէն բանի տեղ- եակ եւ ամէն ինչ կուտան միմեկի իսկ աղբիւրին ուրկէ բղխելու անմիջապէս երկու հերոսները կը ձերբակալէ։ Բայց ով զարմանք, կատարութիւնը ձեռ- քը աշխատեալ փաստեր ունենալով ինչ բանն էր որ կը ձերբակալէր, մին անմիջա- պէս իսկ միւսը երեք օրէն ազատ ա- ձակելու եւ եթէ ամէնէն քամահրելի կէտ մը կայ ան ալ Զուլաքանի պէս արարածի մը խնայելին կարեւոր ան- զանիւնքէն մէկուն երաշխաւոր ինքն է, որ ամենայնպէս ֆէյսան իսկ իրեն արժանապատուութեան նախատինք պիտի համարէր այդպիսի հրէշի մը ե- րաշխաւոր ըլլալ։

Այսպէս այս խնդիրը իր քնացած վի- ճակին մէջ, օր մը յանկարծ Գասապ Զարեհը կերեւի հայկական սրճարանը վրան գլուխ թափով փած, կէս մը ա- նօթի վիճակի մէջ։ (որովհետեւ տը- րուած ոսկինքը խաղարանները կու- տուած էին) եւ կը ըստին իր տանքներ տեղալ Անդրանիկեանի, Տաղաւարեա- նի եւ այլոց հասցէներուն, ըսելով «ես ամեն ինչ երեւան պիտի հանեմ, եղած դատարարութիւններն ալ, միայն դրամի կը կարծողի, որ փաստաբան մը ըլլու- նեմ եւ անոնց ամենուն խէրը անի- ծնալ»։ Այս խօսքերը ուրիշ անթիւ ալ ուրիշ տեղեր կը կրկնէ։ Գաւազիր խմբ- բակը քեցնելով որ ազատուած չկայ եւ օր մը չէ օր մը ամեն ինչ մերկապարա- նոց պիտի ըլլայ, կը տփալտուին կոկիկ գուճար մը տալով հեռացնել զանոնք ներկայութենէն, (հիմա կիմանանք որ Ռու- մանիս է)։

Այս խնդիրներու մասին թէեւ օլու- սաբեր» տող մը անգամ չը գրեց, մի- այն «Արշալոյս» թերթի խմբագիր Ե- ղիյէ թարգման «Ազգայն» արտատպե- լով այս խնդիրներու մասին քանի մը

տողով, Անդրանիկեանի օձիքէն բռնեց գիտնալով որ կրկին կու՛մն է՝ ինքն ալ կրնայ օգտուիլ միւս բախտախն- դիրներուն պէս, եւ յաջողեցաւ։

Եւ Անդրանիկեան արդէն ինքզին- քը մատնեց այն ժամանակ, երբ փո- խանակ «Արշալոյս» խմբագրութեան ղեմ զատ բանալու, ոսկիով գոցեց բե- րանը։

Եւ անա այսպէս զաւարտութիւնը յան- գեցաւ ոճիրը զաւաճաններու կողմէ, եւ օր մը մօթ գիշեր մը ինկաւ խեղճ Արփիարը Գահիրէի մայրերուն վրայ զիստապատ, իր այսքան տարուան բազմախոնջ աշխատութեան իբր արդ- իւնքը ունենալով իր քով չեղած մը չոր հաց եւ կտոր մը պանիր։ Եւ վերջա- պէս նա զոհը եղաւ անոնց ունեցած ա- մէն կերպով պաշտպանուելու երազեց։

Վերջին պահուն կիւսանալք օր Գոչ- եան դեռ ոստիկանութեան քով պա- հուած է։

Սահակ

16 յունիս 98

Գահիրէ

ԻՍ ՍԻՐԵԼԻՆ

Թէ յուսախար իմ լանջքիս տակ Սիրոյ տեղ սուգ զընէ բոյն, Կ'ըստփութիմ ես երբ ջինջ յասակ Նայուածքդ, ինձ ուղղես դուն։

Թէ ցօրտ քամին փռէ յանկարծ թառամի կիսնքիս իմ վարուն, Զեռքդ սրտիս վրայ դրած Անկողնիս քով նստէ դուն։

Թէ չկրնամ այլուս ապրիլ, Նշեմ մահուան ես ի զուէն, Սէր արցունքէդ զէթ մի կտրիլ Երբիս վրայ ցօղէ դուն։

Տապանաքտը թէ կանգնելով Գրեն վրան իմ անուն, Անունիս տակ սեւ գրերով »Սիրոյ զուն է« գրէ դուն։

Դիմ ու ռազ

ՍԻԼԻՍՏՐԵԻ ԱԶԳ. ՎՍՐԺԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԱՆԴԵՆՈՐ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՊԱՐԼԱՄԵՆԸ

Այսօր 25-ին, ըստ կանխագոյն կարգադրութեան քաղաքիս ազգ, երկ- սեռ վարժարանի պատ, հոգաբարձու- թեան տեղւոյս «Օրէնքի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ Սիլիստրէի ազգ, երկսեռ վարժարանի ամսվերջին հանդէսը, այս անթիւ յարմար կը նկատեմ ներկայիս քանի մը ան- ղեկութիւններ զրի առնել։

—Սիլիստրէ համեմատաբար Ռուս- ջուքի ու վառնայի թէ եւ փոքրիկ հայ դպրութ մը պարունակով քաղաք մըն է, բայց իր ազգային մարմնայ համերաշխ գործառնութեամբ չափ գե- ղեցիկ օրինակ մը կրնայ ըլլալ իր զրացիներուն։ — Այս փոքրաթիւ հայ դպրութ մը զոհողութեան ու աշխատու- թեան արդիւնքովը կը պահէ միշտ պայծառ իր եկեղեցին, կանոնաւոր — միջավայրին յարմար — գրութեան մը մէջ իր երկսեռ վարժարանը որուն բարեկարգութեան այնքան նախանձա- խնդիր է. ունի նաեւ իր ազգային գրադարան — ընթերցարանը, Ասկէ զատ 907 — 908 դպրոցական տարե- չըջանին, պատ, Թաղականութեան եւ հոգաբարձութեան միաձայն կողմի- համաձայն, տեղւոյս ողնիւ հայ տիկին-

ները ժողով մը գումարելով, մեր հովիւ Տ. Սարգիս Հայր Ղարիպեանի նախագահութեան ներքեւ կազմեցին «Ազգ. մանկապարտէզի տիկնանց խնամակալութիւնը։

Ազգ. մանկապարտէզի Տիկնանց խնամակալութեան յարգելի անդամու- չիք, Տ. Տ. Մարթիցայ Ա. Փափազ- եան, Եղիսարէթ Յ. ս. Փափազեան եւ Վէրքին Պապիկեանը, իրենց մայրա- կան խանդակաթ գործով այնքան սիրալոթար ջանք ու խնամք թափեցին ու այնքան հոգ տուին եւ այս կարեւոր գործին փարեցան որ իրենց այդ ուն- նուէր աշխատութեան զրական արդիւն քը, Ազգային Մանկապարտէզի 907 908 տարեչըջանի բոլորմամբ տեսնե- լով ու գնահատելով հոգաբարձու- թիւնը այս անգամ իր կարողացած եռամեայ տեղեկագրին մէջ չէր մոռ- ցած շնորհակալութեան մեծ տեղ մը տալ «խնամակալութեան» Ազգ. Տիկին- ներուն ինչպէս եւ Պատ. Թաղակա- նութեան, որոյ հետ ունեցած համերաշ- խութեամբ յաջողած է իր եռամեայ պաշտօնավարութեան չըջանը կարելի եղածին չափ արդիւնաւորել։

Հոգաբարձութեան տեղեկագրէն ու հաշուետւութեան կը ստուգենք որ, 905 օգ. ս. 25 էն 908 յունիս 22ը վարժարանի անուամբ եղած դրամա- կան ընդհանուր մուտքի զուժարը 12,000 ֆր, եղած է մօտաւորապէս, այսինքն այդ երեք տարիներու իւրա- քանչւորին համար 4)00 ֆր. ծախսու- ած է վարժարանին վրայ, վարժարանի ներքին վիճաւ միջավայրի պահա- նջներու համապատասխան ուղղու- թեան մը վերածելու համար, առաւ- ձին հոգ ու խնամք տարուած է թէ հոգաբարձութեան եւ թէ ուսուցչական խումբի կողմէն, այս բանին իբր գրաւական կրնանք մէջ բերել այն գոհացուցիչ վկայութիւնը զոր Սիլիստրէի Պուլնահանգային կրթա- կան Տեսուչը իր պաշտօնագրութեանց մէջ տուած է ինպատ մեր վարժարանի, Դպրոցական տարեկան քննութեանց իր կողմէ խրկուած անլեզաթներու ան- կողմնակալ տեղեկութիւններն առնելէ եւ ինքն անձամբ ստուգելէ ետք։

Ինչպէս ըսի, այսօր հոգաբարձու- թիւնը իր «եռամեայ» տեղեկագրի ու հաշուետւութեան հետ տուաւ նա եւ իր հրապարակները Մենք սրտանց կը մաղ- թենք որ, առաջիկայ օգոստոսին կա- տարուելիք նոր ընտրութեամբ այս Պատ. հրապարակ մարմինը ունենար իր արժանաւոր յաջորդը, եւ համեստ Սիլիստրէի ազգ, կեանքը ցանկալի խաղաղութիւնը անվար յարատեւէ իր շաղկին մէջ։

Դպրոցի ամսվերջի հանդէսը պայմա- նադրական երգերէն ու արտասանու- թիւններէն զատ՝ այս տարի տեղիս կազմուած «Հայկական հուսադաւաճի կողմէ ընդմիջաբար նուագուելով» նո- րոյթի երեւոյթով անցան բաւական տպաւորիչ կերպով։ Հանդէսի վերջը կը կազմէր «Հաւատք — Յոյս եւ Սէր» ողբերգութեան մէկ արարուածը զոր ներկայացուցին դպրոցի սաներն ու սանուհիներն բաւական յուզիչ ու ցնցող կերպով։

Սիլիստրացիին այս տարի իր բարոյա- կան մշակներու հանդէպ ունեցած գիտակցական համակրանքի գեղեցիկ օրինակ մը տուաւ։ Իր դպրոցներու բարոյական արդիւնքէն գոհ, իբր անհատաշէնայ իր անկեղծ գոհու- թեան ոսկեայ ժամացոյց մը նուիրեց տնօրէն ուսուցչի Պ. Արամ Սահակեանի, 200 ֆր. արժողութեամբ։

Սիլիստրէի ազգայիններու այս ան- նախընթաց քայլը մեզի սրտաւրդիչ

յոյսեր կը ներշնչէ իր ապագայ գի- տակից դորձադարձութեան ու ներկայ պարտաճանաչութեան մասին. միթէ փոքրիկ Սիլիստրէի այս գեղեցկագոյն օրինակը իր ցոլացումը չի՞ կրնար ու- նենալ իւր դրացի մեծ քաղաքներու ազգային կեանքի մէջը։ — Յուսանք արդեօք։ —

(* * *)

25 Յունիս 1908

Սիլիստրէ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Սօֆիայի մէջ Պուլկարահայ Հա- մաժողով բացուած է երկուշաբ- թի օր եւ նախագահ ընտրուած է Տ. Յակոբ Մաւետին, Վառնայի ար- ժանաւորագոյն պատգամաւորը։

— Պուլկարէն կրկին նամակներ հասած են մեզ, որոնք ցաւ ի սիրտ կը նկարագրեն պատ- գամաւորի ընտրութեան առթիւ տեղի ունեցած վէճերը ու կուի- ները։ Փութարկութեան միջոցին երեք անգամ ընդհանուր տեղի ունեցած է Գաբրիէլ անունով Միութեանական մը ծանր հար- տաւոր ընդունած է դաշնակ- ցականներէ, նամակագիրը կընէ «Եթէ քուէի առաւելութիւնը ասոնց է վիճակուած, սակայն ա- մենազղուելի եղանակով մը» այդ վէճերը պատճառ եղած են որ Պուլկարի եկեղեցին զրկուի բանիմաց թաղ. խորհուրդէ մը որ հազիւ հազ կըցած էր երկու կողմը համերաշխեցնելու, եւ կը յաւելու, «Ազգերնիս կը յառաջա- դիմէ կոր շնորհիւ միտն — դաշ- նակցականներու»։

Այս վերջիններու ընտրելին Սօֆիա բնակող Յակոբեան ա- նունով անձ մըն է եղեր։

— Մեզ կը տեղեկացնեն թէ Նու- մլայէ պատգամաւոր ընտրուել է Տիար Գասպար Լէմցէ, իսկ Թ. Բաղարճըգէն, Տ. Թորոս Ներսէս- եան պատուաւոր ազգայինները։

— Անիծող որբերէն նոր գրու- թիւններ ստացած ենք հրա- տարակելու խնդրանք։ Անոնք կը պնդեն ու կը բացատրեն թէ իրենց վանի որբանոցէն զրկ- ուելու եւ թափառական խեղճ վիճակի մը մատնուելու պատճառ եղած են տեղւոյն դաշնակցական չէֆերը։ Մենք բանաւոր պատ- ճառներ ունինք այդ գրութիւն- ները նոյնութեամբ չը հրա- տարակելու։

ՈՒՍՈՒՑԻՉ ԿՈՒՋՈՒԻ

Սուչաւայի հայ վարժարանին համար կարող ուսուցչուհի մը պէտք կայ, նաեւ եկեղեցիին համար ալ տիրացուի մը, որը միւսոյն ժամանակ վարժար- անին մէջ օգնական ուսուցչի ալ պաշ- տօն պէտք է վարէ. նախընտրելի է այդ ու կին կամ քոյր ու եղբայր։

Նախագահ եկեղ. Հոգաբարձութեան Սուչաւայի Վարդեմ Վոն Փրոմեմուլան Մանրամասնութեանց համար գիմել հետեւեալ հասցէին։

Տիար Վարդեմ Վոն Փրոմեմուլ Սուչաւա (Աւստրիա — Պուգովինա)

ԹԻԻՏ ԲԻԼԼ

Издатель: Д-ръ М. Торосиянъ